

գիրներ կազմէ. տքնի չարչարուի նրանց իրականացնելու համար. բայց ահա դպրոցից վերադառնում է նրա որդին և յայտնում է թէ դպրոցից դուրս արին, որովհետև ուսման վարձը չէ վճարել: Բայց ահա անհրաժեշտ կարիքը ճնշում է նրան, թուլացնում ձեռները, կտրում թևերը, վայր գցում»:

Այո, նիւթի ծանր հարուածն է որ հայ գործիչներին շատերին մուրացկանութեան հասցրեց. նա է որ ճնշում, քամում է նրանց սիրտը, որ ի վերջոյ ստիպում է գերեզմանին մօտեցած՝ վշտացած հոգւով իւրեանց դառնութիւնը թափել հասարակութեան վրայ. «Ապերախտ աստարակութիւն, որ գիտէ միայն դիակներ սիրել...»:

Ասլան Գահնուգարեանց

«ԼՈՒՄԱՅԻ» ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

«Արարատի Բ. Թումա բարձր. Բարդուղիմէոս վարդապետը մի նամակով նախ աշխատում է «Լումայ» մատենախօսութեան առիթ որոնել. Այնուհետև յառաջ բերելով մի քանի կէտեր՝ մեծաբար պարտք է դնում մեզ վրայ բացատրելու, որ ինքը հասկանայ: Մենք էլ խոնարհաբար բացատրենք:

Բարձր. հայրն ասում է՝ որ «զակազով» (յանձնարարութեամբ) եմ գրել: Թող յայտնի լինի իւրեան, որ սովորաբար օրինաւոր ամսագրների ու թերթերի մատենախօսութիւնք յանձնարարութեամբ են գրւում. «Վաղ վաղ» ածականաւոր է համարում այդ գնահատութիւնը, չգիտենալով որ գնահատութեան ժամանակի կարիքը բղիւում է իւրաքանչիւր գրուածքի ներքին արժանիքից, ըստ որում այս էլ շատ եղաւ:

Ասում է որ «այնքան լաւ լաւ և հազիւ թէ վատ կարծիքներ» եմ շուայել. «մինչդեռ ոչ թէ կարծիքներ չեմ «շուայել», այլ և լաւ լաւ կարծիքներ բնաւ. ասած չեմ, այլ միայն որոշել եմ գրուածքի արժանիքը կամ կարդալու շահը և այն տեսակէտը, որով պէտք է առաջնորդուի ընթերցողը:

Գրում է որ ընդամենը մի բան եմ մէջ բերել և սխալ գտել, այն է՝ «վերաբանութեան» միտքը և ասում է որ միայն տեղի խնդիր է և ոչ իմաստի: Մինչդեռ յառաջ եմ բերել մի քանի բան իբրև օրինակ, իսկ սխալներ յառաջ բերելու կարիք չկար, քանի որ քննադատութիւն չէի գրում և աւելորդ էլ էր մի առ մի քննադատել մի գրուածք, որի քննադատական ար-

ժէքը իւր ընդհանուր մատենախօսական գնահատութեամբ որոշուած է, իսկ առանձին կէտերի ուղիղ կամ սխալ և նոր կամ յայտնի լինելը կնկատի ամեն մի ուսումնասիրող: Բայց իմ գնահատութեան շատ նկատողութեանց մէջ նա դժգոհում է մի երկուսից միայն. նախ որ նկատել եմ թէ զբնութեան նախապատրաստութիւնը Հ. Ստեփանէի թարգմանութեան յառաջաբանով է, և ուրանում է թէ ինքը այդպիսի բան ասած չունի. թող ապա կարգայ. Վյա անյաջող թարգմանութիւնից, բայց և սիրուն և հարուստ առաջաբանից և ծանօթութիւններից տեղեկացել եմ ուրիշների սրբադրութիւնները, կարծիքները և բացատրութիւնները (ըին): Այս թէ որքան է հասկացել ուրիշների ասածները, պարզ նկատուած է նաև այս անգամ, վասն զի «վերաբանութեան» խնդիրը տեղի խնդիր է համարուած և չէ հասկանում, որ իմաստը գտնելու համար են տեղափոխել այդ բառը:

Նախապատրաստութիւնը ակնարկելուց յետոյ յիշել էի այն ոգին, որով առաջնորդուած է հեղինակը և նկատել, որ ճշմարտասիրութեան համար պէտք է լինի այդ ոգին և ոչ խղճի կամ շահի տեսակէտով: Իսկ խղճի կամ շահի տեսակէտն, որ երկրորդն է և հեղինակը ուրանում է, ահա—էջ 71. ծան. տող 7. ներքևից. «Աս (հ. հեղինակը) յաւելացրի. Խորենացուն փոխարինող ուրիշ պատմութիւն չունինք դոնէ, ցանկալի էր որ մերոնք ձեռնհաս մարդիկդ դեռ աշխատէիք ի նպաստ Խորենացու»:

Հ. Հեղինակը «տգեղ» է համարում այս «ակնարկը», բայց ինչո՞ւ տգեղ համարել ակնարկը և ոչ ակնարկեալը:

Վերջապէս հ. հեղինակը երկիւղ է կրում որ իւր ընթերցողները «աննպաստ կարծիք» կստանան այդ ամենից. բայց առանց այդ էլ դժուար թէ մի ընթերցողի կարողանայ ներշնչել իւր գրուածքի մասին իւր ունեցած կարծիքը: Խոնարհութիւն ընթերցողի առաջ!!!: Խոնարհութիւնը այնքան մեծ զարդարանք է, որքան բարձր է խոնարհուողը:

Ա. Տէր-Միքէլեան

ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՃԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Առաջիկայ 1901 թուին լրանում է Հայոց լուստուրութեան